

«Վավերացնում եմ»

Հայաստանի Հանրապետության
Սախազահ Ռ. Քոչարյան
24 նոյեմբերի 2005 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

15 նոյեմբերի 2005 թվականի N 1957-Ն

1444 ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2005 ՔՎԱԿԱՆԻ ՎՊԻՒԼԻ 28-Ի N 540-Ն ՈՐՈՇՄԱՆ* ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի ապրիլի 28-ի «Ծխախոտի վերաբերյալ տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին» N 540-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները՝

ա) որոշման 2-րդ կետի «ա» ենթակետում «3 ամսվա» բառերը փոխարինել «6 ամսվա» բառերով և նույն ենթակետից հանել «պետտիցիդների մնացորդային քանակությունների և» բառերը.

բ) որոշման հավելվածի՝

21-րդ կետի առաջին պարբերության մեջ «16-րդ կետում» բառերը փոխարինել «15-րդ կետում» բառերով, իսկ երկրորդ պարբերության մեջ «Պատրաստողի» բառը՝ «Արտադրողի» բառով,

• 27-րդ կետի երկրորդ պարբերության մեջ «Պեստիցիդների մնացորդային» բառերը փոխարինել «Ռադիոնուկլիդների» բառով,

VIII բաժնի ցանկը լրացնել հետևյալ տողերով՝

Ստանդարտի նշագիրը (կետը)	Պահանջներ և փորձարկման մեթոդներ սահմանող ստանդարտի անվանումը
ՊՕՍՏ 31263-2004	Ծխախոտ և ծխախոտային արտադրատեսակներ երկթիոկարբոնատապետիցիդների մնացորդային քանակությունների պարունակության որոշում Մոլեկուլային աքսորըցիոն սպեկտրաչափական մեթոդ
ՊՕՍՏ 31264-2004	Սիգարետներ. Ոչ դիսպերսային ենթակարմիր անալիզատորի օգնությամբ սիգարետային ծխի զազային փուլում մոնոօքսիդի ածխածնի պարունակության որոշում
ՊՕՍՏ 31265-2004	Ծխախոտ. Բլորոթզանական պեստիցիդների մնացորդային քանակությունների որոշում Փազաքրոմատագրական մեթոդ

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրատարակմանը հաջորդող օրվանից:

Հայաստանի Հանրապետության
վարչապետ

Ա. Մարգարյան

2005 թ. նոյեմբերի 21
Երևան

* ԳԳՊՏ 2005 N 33 (405), 01.06.05